

Պատվաստում COVID-19-ի դեմ

Բոլոր պատվաստանյութերը COVID-19-ի դեմ, որոնք առաջարկվում են Կանադայում, անվտանգ են և արդյունավետ: Այդ պատվաստանյութերը հաստատված են փորձագետների հանձնաշուկով, որի մեջ են հեղինակավոր գիտնականներ և բժիշկներ: Այդ պատվաստանյութերը ենթարկվում են նույն որակի և անվտանգության չափանիշներին, ինչպես մնացած բոլոր պատվաստանյութերը, որոնք օգտագործվում են Կանադայում:

Եվ Կանադայում և Զվեբեկում գոյություն ունի պատվաստանյութերի մոնիթորինգի շատ մանրակրկիթ համակարգեր:

Ինչու՞ պատվաստվել:

Ապացուցված է, որ COVID-19-ի դեմ բոլոր պատվաստանյութերը, որոնք հաստատված են Կանադայի առողջապահության նախարարության կողմից, կանխարգելում են հիվանդության ավելի լուրջ տեսակները և բարդացման վտանգները: Դրանք նաև օգնում են նվազեցնել հոսպիտալացման, մահացության և բնակչության շրջանում վարակի տարածման քանակը: Բացի այդ, բոլորի պատվաստումը կոզնի պահպանել մեր առողջապահության համակարգի նորմալ աշխատանքը:

Ո՞վ է վտանգի գոտում:

Տարեց մարդիկ գտնվում են վտանգի գոտում և նրանք ավելի հաճախ են ունենում բարդացումներ և ավելի շատ տարեցներ են մահանում COVID-19-ից: Վտանգի մեջ են նաև այն մարդիկ, ովքեր ունեն քրոնիկ հիվանդություններ, հաճախ են շփվում վարակվածների հետ, կամ ունեն ոչ բավարար աուտոիմունային համակարգ: Բայց տարիքը մնում է վտանգի հիմնական գործոնը:

Ստացվել է այնպես, որ ես աշխատում եմ առողջապահական համակարգում: Կարո՞ղ եմ արդյոք պատվաստվել սկզբում՝ հաշվի չառնելով տարիքս:

Այո, եթե դուք անմիջապես բուժում եք հիվանդների, ապա կա վտանգ որ դուք կվարակվեք COVID-19-ով: Ընդունվել են միջոցներ, որպեսզի դուք կարողանաք պատվաստվել աշխատանքի վայրում: Պատվաստումը խորհուրդ է տրվում, քանի որ այն կարող է օգնել ձեզ խուսափել տարատեսակ բարդացումներից, և օգնել պաշտպանել ձեր հիվանդներին և ընտանիքի անդամներին:

Որտե՞ղ կարելի է պատվաստվել:

Առաջնահերթություն ունեցող խմբերի անհատներին հիմա խորհուրդ է տրվում գրանցվել բժշկի ընդունելության, իրենց տանը մոտ գտնվող պատվաստման կենտրոն այցելելու համար: Հարկավոր է այցելել Québec.ca/vaccinCOVID կայքը: Պատվաստումը անվճար է և կատարվում է Քվեբեկի իմունիզացիայի ծրագրի շրջանակներում: Հնարավոր չէ գնել պատվաստանյութը այլ վայրում:

Իմ համար բարդ է կողմնորոշվել ինտերնետում, կամ իմ տարածաշրջանում մոտակա ժամանակներս պատվաստման կենտրոններ չեն լինելու:

Չանգահարեք [1 877 644-4545](tel:18776444545) համարով և ձեզ կօգնեն: Դուք նաև կարող եք սկզբում հավաքելով ձեր քաղաքի կոդը գանգահարել 644-4545 համարով և կապ հաստատել աջակցման կենտրոնի հետ:

Մե՞կ չափաբաժին թե երկու:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նույնիսկ պատվաստանյութի մեկ չափաբաժինը էականորեն նվազեցնում է COVID-19-ի բարդ տեսակների առաջացման հնարավորությունները, նույնիսկ տարեց մարդկանց շրջանում: Երկրորդ չափաբաժինը արդյունավետ է օպտիմալ պաշտպանության համար: Ձեր առաջին այցելության ժամանակ կնշանակվի երկրորդ այցելության օր, որը կլինի առաջին չափաբաժինը ընդունելուց 16 շաբաթ անց: Պատվաստումից հետո ձեզ կտրվի փաստաթուղթ, որը հաստատում է պատվաստումը:

Այն մարդկանց համար, ովքեր արդեն իսկ վարակվել են COVID-19-ով մինչ պատվաստում ստանալը, հարկավոր է միայն պատվաստանյութի մեկ չափաբաժին: Վարակը առաջացնում է աուտոիմունային համակարգի արձագանք ինչպես և պատվաստանյութի առաջին չափաբաժինը: Այդ ձևով, ներարկված պատվաստանյութի չափաբաժինը այն մարդուն ով արդեն իսկ վարակված եղել է COVID-19-ով, ունի հետադարձ կանչի էֆեկտ, ինչպես պատվաստանյութի երկրորդ չափաբաժինը չվարակված մարդու համար: Ուշադրություն դարձրեք, որ պատվաստանյութի երկու չափաբաժինների ստացումը վտանգավոր չէ, նույնիսկ այն պարագայում եթե անհատն արդեն իսկ COVID-19-ով վարակվել է:

Կարո՞ղ եմ արդյոք վերջ տալ ֆիզիկական հեռավորության պահպանմանը և դիմակի կրմանը, լինելով պատվաստված:

Դուք պետք է իմանաք, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութը կգործի առնվազն 14 օր հետո: Կպահանջվեն շատ ամիսներ, մինչև որ բնակչության մեծ մասը կունենա լիակատար պաշտպանություն պատվաստանյութի շնորհիվ: Այսպիսով, հարկավոր է պահպանել երկու մետր ֆիզիկական հեռավորության, դիմակի կրման և ձեռքերի հաճախ

վացման կանոնները: Այն ժամանակ, երբ բնակչության մեծ մասը պատվաստված կլինի և վարակի տարածումը վերահսկելի կլինի, կառավարությունը կհայտարարի նոր միջոցառումների մասին:

Կարո՞ղ եմ ընտրել պատվաստանյութը:

Ոչ: Հնարավոր չէ ընտրել պատվաստանյութը, որը պետք է ներարկվի: Այն կնշանակվի հաշվի առնելով հասանելի չափաբաժինները: Բոլոր հասանելի պատվաստանյութերը ապահովում են 80% ավելի պաշտպանություն COVID-19-ի առավել տարածված և վտանգավոր հետևանքներից, կանխարգելելով միաժամանակ հոպիտալացումը և մահը: Երբ ձեր հերթը հասնի, կարևոր է որ դուք պատվաստվեք այն պատվաստանյութով, որը այդ պահին առկա է ձեր այցելած կենտրոնում: Եթե ձեզ անհանգստացնում առաջարկվող պատվաստանյութը, տեղեկացրեք ձեզ հետազոտող բժշկին անմիջապես պատվաստման կետրոն հասնելուց հետո: Դրանից հետո, դուք կարող եք կայացնել հիմնավորված որոշում:

Ես չունեմ Զվեբեկի բժշկական ապահովագրության քարտ... [Ես մշտական բնակիչ չեմ]...; կարո՞ղ եմ պատվաստվել:

Այո, քանի որ պատվաստումը հասարակության առողջապահական միջոց է, որը ուղղված է Զվեբեկի ամբողջ բնակչության պաշտպանությանը: Օնլայն ձևաթղթում այսպիսի կարգավիճակ է հաստատվում՝ դուք կարող եք տեսնել գիծը կամ շրջանակը, որում նշվում է, որ դուք չունեք Զվեբեկի առողջապահական ապահովագրության քարտ: Դուք պետք է ավելացնեք ձեր ծննդյան օրը, անունը, մոր ազգանունը և եթե հնարավոր է ձեր տեղորոշման տվյալները, որպեսզի մենք կարողանանք կապ հաստատել ձեր հետ պատվաստանյութի երկրորդ չափաբաժինը ձեզ հասցնելու համար: **Ձեր խնդրացիոն կարգավիճակը նշանակություն չունի երբ խոսքը վերաբերվում է ձեր պատվաստվելու իրավունքին:** Խնդիրներ առաջանալու պարագայում զանգահարեք COVID-ի ինֆորմացիոն կենտրոնի հեռախոսահամարին որը նշված է վերևում:

Հիշեք. Պատվաստանյութը չի պաշտպանում ձեզ COVID-19-ից 100%, բայց նվազեցնում է ախտանիշները և թույլ է տալիս խուսափել հիվանդության բարդացումներից, կապված վարակի հետ: Մենք պարտավոր ենք պաշտպանել մեզ, և մեր ընտանիքի, հասարակության և աշխատանքային միջավայրի անդամներին:

